

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Մ Ա Ր Մ Ա Շ Ե Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի
2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման
ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով
խորհրդակցական մարմնի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Կ.Արշակյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 55
որոշմամբ

ՄԱՐՄԱՇԵՆ 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳԻՐԸ
7. ՀԶՀԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ
- ԵԶՐԱՓԱԿՈՒՄՅԹ 1. ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ
- ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ՝ ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ.....

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԶՉԾ-Ի ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՏԻՄ-ԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն բազմաբնակավայր համայնքի 2018-2022 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» և նույն կազմակերպության կողմից 2016 թվականին մշակված «Բազմաբնակավայր համայնքում «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման» ուղեցույցի¹ մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Մարմաշեն համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶՀԾ-ի մշակմանը մասնակից համայնքի բնակավայրերի աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ԲԱԽ-երի) կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ)

¹ Ուղեցույցը մշակվել է ԳՄՀՀ-ի ֆինանսավորմամբ ՀՖՄ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում

հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ համայնքը ձևավորվել է ՀՀ կառավարության կողմից համայնքների խոշորացման պետական փորձնական ծրագրի իրականացմամբ և գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և այս առումով մեծացել են համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: ՀԶՀԾ-ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են բնակավայրային ժողովների ժամանակ ԲԱԽ-երի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու ՀԶՀԾ-ի մշակման խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2018-2022թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2018-2022թթ. ՀԶՀԾ-ն ներկայացնում է Մարմաշեն համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների

արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Մարմաշեն համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Մարմաշեն համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Մարմաշենի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել են նաև Մարմաշեն բազմաբնակավայր համայնքի և նրա կազմում ընդգրկված բնակավայրերի՝ նախկին համայնքների նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը:

ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶՀԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶՀԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶՀԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀԶՀԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶՀԾ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀԶՀԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

ՀԶՀԾ-ի 7-րդ բաժնում ներկայացվում է ՀԶՀԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

ՀԶՀԾ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶՀԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀԶՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

ՀԶՀԾ-ի հավելվածներ բաժնում ներկայացվում է մանրամասն և լայնածավալ տեղեկատվություն տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են համայնքի հիմնական

ցուցանիշների՝ գալիք հինգ տարիների կտրվածքով գնահատում և կանխատեսում, համայնքի ոլորտային ծրագրերի՝ ըստ ծրագրերի օրինակելի ձևի ձևակերպումներ և այլն:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՂՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Մարմաշեն բազմաբնակավայր համայնքը ձևավորվել է նախկին Կապս, Վահրամաբերդ, Մարմաշեն, Հովունի, Քեթի, Փոքրաշեն, Հացիկ, Շիրակ, Ջաջուռ, Կարմրաքար, Լեռնուտ, Մեծ Սարիար, Կրաշեն, Ջաջուռավան, Մայիսյան համայնքների միավորումից՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2015 թվականի նոյեմբերի 24-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն: Համայնքի կենտրոնը Մայիսյան բնակավայրն է: Համայնքի կենտրոնի՝ Մայիսյան բնակավայրի, հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 131 կմ, մարզկենտրոնից՝ 7կմ, բնակավայրով է անցնում Գյումրի-Աշոցք-Բավրա միջպետական նշանակության ճանապարհը, Երևան-Թբիլիսի երկաթգիծը: Ներբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Մարմաշեն համայնքի բոլոր բնակավայրերը (աղյուսակ 1)

Աղյուսակ 1. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից և բարձրությունը ծովի մակերևույթից

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից	Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից
1.	Մայիսյան	0	1660մ
2.	Կապս	13	1700մ
3.	Վահրամաբերդ	12	1650մ
4.	Մարմաշեն	9.1	1620մ
5.	Հովունի	5.3	1750մ
6.	Քեթի	3.7	1750մ
7.	Փոքրաշեն	7.1	1900մ
8.	Հացիկ	3	1650մ
9	Շիրակ	7.4	1650մ
10	Զաջուռ	13	1800մ
11	Կարմրաքար	6	1800մ
12	Լեռնուտ	16	1830մ
13	Մեծ Սարիար	15	1905մ
14	Կրաշեն	17	1880մ
15	Զաջուռավան	14	1800մ

ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Նախկինում ունեցել է Օրթաքիլիսա անվանումը: Մայիսյան է վերանվանվել 1946 թ-ին: Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1660մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը ցուրտ է, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաքթերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Ունի սև տուֆի պաշարներ, որոնք ունեն արդյունբերական նշանակություն:

Գյուղում գտնվում է 7-րդ դարի Տիրանավոր ս. Աստվածածին եկեղեցին:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի և Էրզրումի գավառներից, Կարսի մարզից: Ներկայում Մայիսյան գյուղն ունի 515 տնտեսություն: Ունի դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 1008.44հա: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային

կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ, մեղվապահությամբ:

Ունի շինանյութերի արտադրություն:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Կապս գյուղը հիմնադրվել է 1820 թվականին, որտեղ բնակություն են հաստատել արևմտյան Հայաստանից՝ Բայազետի Տիգոր և Ակրակ գյուղերից գաղթածները: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 12կմ հեռավորության վրա և ծովի մակերևույթից բարձր է 1700 մ: Սկզբում գյուղացիների բնակվել են ներկայիս Կապսի տարածքից ոչ հեռու գտնվող տարածքում և զբաղվել են անասնապահությամբ և ձկնորսությամբ: Հին գյուղում 1860-ականներին կառուցվել է եկեղեցի՝ Տեր Թորոս քահանայի շնորհիվ, երկար տարիների կիսափլված վիճակից, այժմ վերակառուցվում է գյուղի բնակիչների կողմից, ինչն էլ վկայում է կապսեցիների հավատքի մասին: Կապսի տարածում եղել է կավ, որով էլ կանայք պատրաստել են տարաներ և օգտագործել տարբեր նպատակների համար: 1937 թվականից բնակիչները սկսել են տեղափոխվել մոտ 500մ հյուսիս - արևելք: 1961- ական թվականներից արդեն ամբողջ գյուղն է բնակվել այնտեղ: 1924 թվականին սկսվել են Շիր ջրանցքի, նախապատրաստական աշխատանքները, որի շինարարության պետը եղել է Վասիլ Վասիլևիչը:

ԶԱԶՈՒՌ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Շիրակի մարզի Ախուրյանի տարածքային Զաջուռ գյուղը հիմնադրվել է 1828թվականին, արևմտյան Հայաստանի Մուշ և Խնուս գավառներից տեղահանված գաղթականների կողմից: Հիմնադրման օրվանից գյուղը կոչվել է Զաջուռ: Գյուղի անունը առաջացել է (ավանդույթի համաձայն) <<ջան ջուր>> և <<ջոջ ուռենի>> դարձվածքներից: Գյուղը հայտնի է իր խմելու ջրի, սառնորակ աղբյուրների հարուստ պաշարով: Համայնքի ազգաբնակչությունը հայեր են: Գյուղը ունեցել է ծխական դպրոց, որի բազայի վրա 1870 թվականին բացվել է տարածաշրջանի միջնակարգ դպրոցը, որտեղ հաճախել են յոթ գյուղերի երեխաներ: Գյուղում է տեղակայված եղել տարածաշրջանի հիվանդանոցը,

դատարանը: 1988թ-ի երկրաշարժի հետևանքով գյուղը ամբողջովին ավերվել է: 1989-1901 թթ. կառուցվել է Ջաջուռի թունելը 2 կմ երկարությամբ կապելով Վրաստանը Գյումրու և Ղարսի նահանգներին:

Ներկայում գյուղում չկա մանկապարտեզ, սպորտդահլիճ, համայնքային կենտրոն, գյուղը գազաֆիկացված չէ:

ՋԱԶՈՒՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ /ՋԱԶՈՒՌ ԿԱՅԱՐԱՆ/

Ջաջուռավան համայնքը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելքում: Գյուղը մարզկենտրոնից հեռու է 15 կմ: Համայնքը նախկինում կոչվել է Ջաջուռի կրի գործարանի բանավան, այստեղ գործել է կրի գործարանը, որը որակյալ կիր է մատակարարել, ինչպես խորհրդային միության, այնպես էլ տեղի շինարարական կազմակերպություններին: 2006 թվականից գյուղը վերանվանվեց Ջաջուռավան համայնք: Համայնքը չի օգտվել հողի սեփականաշնորհումից, քանի որ ավանը եղել է արդյունաբերական կառույց, չի ունեցել հողային ռեսուրսներ:

ԿՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 18կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ախյուլի, Ախքիլիսա, Ադյուլի, Ադքիլիսա անվանումները: Կրաշեն է վերանվանվել 1945 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղը գտնվում է Շիրակի լեռնաշղթայի հարավային փեշերին՝ ծովի մակարդակից 1880մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են զգալի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Գյուղի տարածքում գտնվում է 1859 թ-ին կառուցված ս. Աստվածածին եկեղեցին: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Էրզրումի և Պարսկահայաստանի շրջաններից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 219 բնակիչ: Ներկայումս ունի 71 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ

կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ԿԱՐՄՐԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 8կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դարաբանդ, Դարբանդ, Դերբենդ անվանումները: Կարմրաքար է վերանվանվել 1946 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում՝ քարքարոտ վայրում՝ ծովի մակարդակից 1800մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են զգալի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Գյուղի տարածքում գտնվում է երկու ավերակ եկեղեցիներ: Մոտակայքում կան նախաքրիստոնեական ժամանակների ամրոցի հիմնապատերը, գերեզմաններ և այլ շինություններ: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի և Հայաստանի Աշոցքի շրջաններից: Ունի 17 տնտեսություն: Ունի կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ԼԵՌՆՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 12կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Առըխվալի, Արիխվալի, Արիխվալի Երրորդ, Արըխվալի Մյուս, Արըխվալի Նոր, Ֆարմասոնի անվանումները: Լեռնուտ է վերանվանվել 1967 թ-ին: Գյուղը տեղադրված է Շիրակի լեռնաշղթայի փեշերին, բլրապատ տարածքում՝ ծովի մակարդակից 1830մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը՝ տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով:

Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Մոտակայքում ունի աղբյուրներ, որոնք ջրմուղով հասցվում են գյուղ և օգտագործվում որպես խմելու ջուր: Գյուղի շրջակայքում պահպանվել են հին ամրոց-բերդի ավերակներ, ունի կիսաքանդ եկեղեցի: Բնակչության նախնիների մի մասը 1829-1830թթ գաղթել է Արևմտյան Հայաստանի Խնուսի գավառակից: Ունի 42 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, բուժկետ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՄԵԾ ՍԱՐԻԱՐ

Գյուղը հիմնադրվել է 1820 թվականին, Արևմտյան Հայաստանի՝ Բասենի, Կարսի Ալաշկերտի գավառներից ներգաղթած ընտանիքների կողմից: Սկզբում ներգաղթած ընտանիքների թիվը եղել է ընդամենը 11-ը, որոնք հետագայում բազմանալով շենացրել են գյուղը: Գյուղի բնակիչները զբաղվում են հիմնականում անասնապահությամբ և հողագործությամբ: 1907 թվականին համայնքի միջոցներով գյուղում կառուցվել է եկեղեցի, որը ավերվել է 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով: Մինչև 1991 թվականը գյուղում տնտեսավարման ձևը եղել է կոլեկտիվ-սովխոզային: Գյուղը գտնվում է սեյսմիկ գոտում: 1988 թվականի աղետալի երկրաշարժի հետևանքով ավերվել է համայնքի բնակելի ֆոնդը, կուտուրայի տունը, դպրոցը և գյուղապետարանը: Գյուղը այս տարիների ընթացքում տվել է բազմաթիվ անվանի մարդիկ, նրանցից շատերը ապրում և ստեղծագործում են մեր օրերում: Գյուղը իր մասնակցությունն է ցուցաբերել Հայրենական մեծ պատերազմին և ունեցել է անվանի մարտիկներ: Գյուղն իր փոքրիկ ներդրումն է ունեցել նաև Լեռնային Ղարաբաղի պաշտպանության ժամանակ: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 15

կմ է, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1905 մ: Համայնքի վարչական տարածքը 2326.05 հա է, կարգավիճակը՝ լեռնային:

ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 10կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գանլըճա, Խանլըճա Ներքին, Կանլիջա Ներքին, Ղալանջա Փոքր, Ղինիջան, Մարմաշեն, Վագրամաբերդ անվանումները: Վահրամաբերդ է վերանվանվել 1946 թ-ին ի հիշատակ 10-11-րդ դդ միջնադարի հայ զորավար Վահրամ Պահլավունու: Գյուղը տեղադրված է Ախուրյան գետի ձախափնյա հովտում՝ ծովի մակարդակից 1650մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 450-500մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի պեմզայի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն: Գյուղի շրջակայքում պահպանվել է Մարմաշենի վանքը, Վահրամաշեն ավերակ բերդը, Ախուրյան գետի վրա 13-րդ դարում կառուցված կամրջի մնացորդները: Գյուղի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանից և Կարսի մարզից: Ունի 460 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, պտուղների մշակությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, մշակույթի տան գույքի ձեռքբերում:

ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 7կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գանլըջա, Գալինջա, Գանըճա Վերին, Ղալանջա, Ղանլաչա, Ղանլիճա, Մարյամ Նիշին, Մերեմ Նիշին անվանումները: Մարմաշեն է վերանվանվել 1946 թ-ին: Գյուղի մոտով անցնում է Գյումրի-Աշոցք ավտոխճուղին և Շիրակի ջրանցքը: Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախափնյա հովտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1620մ

բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում կան արտեզյան ջրհորներ: Գյուղի շրջակայքում է գտնվում Մարմաշենի վանքը և նրա շրջակա երեք եկեղեցիները: Գյուղի անվանումը կապված է վանքի անվան հետ: Ըստ Կիրակոս Գանձակեցու վանքը իր անվանումը ստացել է իբրև մարմարակերտ լինելու պատճառով: Այդ փաստը ժխտում է Ղևոնդ Ալիշանը և վանքի անվանումը կապում է Աբխազիայի Մարիամ թագուհու հետ: Վանքի գլխավոր կառույցը կաթողիկե ս. Ստեփանոս եկեղեցին է, որի պատերից մեկի վրա թողնված արձանագրությունը վկայում է, որ այն կառուցել է Վահրամ Պահլավունին՝ 988-1029թթ: Եկեղեցուն կից գերեզմանում հենց թաղված է Վահրամ Պահլավունին, նրա կինը՝ տիկին Սուփին: Միջնադարում այն եղել է կրոնական և մշակութային կենտրոն: Շրջակայքում կան հին բնակավայրի, քարայր-բնակավայրեր: Մարմաշենի մոտ 2կմ արևմուտք ժայռի վրա գտնվում է ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի արձանագրություններից մեկը: Մոտակայքում գտնվում են նաև Մարմաշենի բերդի ավերակները: Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանի Դերջան, Մուշ, Կարս մարզերից: Ունի 561 տնտեսություն: Ունի միջնակարգ և երաժշտական դպրոցներ, մշակույթի տուն, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են այգեգործությամբ, հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ, մեղվապահությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը:

ՀՈՎՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 13կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Եսաղուլ, Հովնունի, Յասաղուլ, Յասաուլ, Փյունիկ անվանումները: Հովնունի է վերանվանվել 1945 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում՝ Ախուրյան գետի աջ ափին՝ ծովի մակարդակից

1750մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանից, Կարսի մարզից ունի 180 տնտեսություն: Ունի դպրոց, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ:

ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Քեթի գյուղը գտնվում է Շիրակի մարզի Ախուրյանի նախկին տարածաշրջանում՝ Երևան-Գյումրի-Վրաստան միջպետական ավտոճանապարհի վրա: Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը 10 կմ, Երևանից՝ 135կմ: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1753.1 հա, բարձրությունը ծովի մակարդակից 1750 մ: Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց, գրադարան, ժամանակավոր դպարից հետո կգործի մանկապարտեզը: Ժամանակակից գյուղը հիմնադրվել է 1829 թվականին նախ որպես Մեծ Քեթի, հետագայում՝ Քեթի: Գյուղը որպես բնակատեղի ունի հին պատմություն: Այդ են վկայում մ.թ.ա. 3-2-րդ հազ. կիկլոպյան ամրոցի, դամբարանադաշտերի և բնակատեղիների, 5-19-րդ դդ. և 12-20-րդ դդ. եկեղեցիների և մատուռների հետքերը, 7-20-րդ դդ. և 19-20-րդ դդ գերեզմանոցները: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հնագիտական բարձր արժեք ներկայացնող նյութեր, որոնք պահպանվում են տարբեր թանգարաններում: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ՝ ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի, բանջարա-բոստանային կուլտուրաների և մրգերի արտադրությամբ: Համայնքի հիմնախնդիրներն են՝ ոռոգման համակարգ, հակակարկտային կայանքների ավելացում:

ՓՈՔՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 14կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գետիկ Ներքին, Լեռնանցք, Կեյտի Պոկր, Կետի Պոկր, Քեթի Ներքին անվանումները: Փոքրաշեն է

վերանվանվել 1967 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ գավառի մեջ: Գյուղը գտնվում է մեղմաթեք լեռնալանջի վրա՝ ծովի մակարդակից 1900մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը, սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղը զգալի տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից, որի արդյունքում ավերվել են գյուղի շինությունների մոտ կեսը: Գյուղի տարածքում գտնվում էս. Հակոբ եկեղեցին: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Բասենի շրջաններից 1829-1830թթ: Ունի 47 տնտեսություն: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, ճակնդեղի մշակությամբ:

ՀԱՅԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 5-6կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքի մեջ մտնում են Հացիկ և Մայիսյան կայարանի գյուղը: Տեղադրված է Վանաձոր-Գյումրի երկաթուղու վրա: Նախկինում Հացիկ գյուղն ունեցել է Թափառլի, Թեփերլի, Թոփառ, Թոփառլու, Թոփարլու անվանումները: Հացիկ է վերանվանվել 1949 թ-ին: Մայիսյան կայարանի գյուղը հիմնադրվել է որպես երկաթուղային կայարանին կից ավան: Կայարանը կառուցվել է 1898 թ-ին: Գյուղը տեղադրված է Շիրակի մեղմաթեք դաշտում՝ ծովի մակարդակից 1650մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Ունի սև տուֆի և ածխի պաշարներ: Գյուղում եղել են զգալի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Շրջակայքում կան հին եկեղեցի և գերեզմանոց, իսկ Հացիկ գյուղից 1կմ հյուսիս-արևելք գտնվում է գյուղատեղի և սրբավայր: Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի շրջաններից, Կարսի մարզից՝ 1829-1830թթ: Ունի 296 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, մշակույթի տուն, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը:

ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Շիրակ գյուղի հեռավորությունը մարզկենտրոնից 7կմ է: Գյուղի վարչական տարածքը կազմում է 16,73 քառ.կմ, ծովի մակերևույթից 1650մետր բարձրության վրա, Շիրակ գյուղը հիմնադրվել է 1827թ.: Ղարսի և Սվազի Նահանգներից գաղթածները եկել և հիմնադրվել են նախկին գյուղի հարավային մասում, Մղդոս կոչվող անձնավորության կողմից: Կլիման բարեխառն է, լանդշաֆտը՝ լեռնատափաստանային, որը բարենպաստ է հողագործության ու անասնապահության համար: Գյուղի բնակատեղին ունի շատ հին պատմություն՝ այդ են վկայում գյուղի գերեզմանոցի տարածքում գտնվող հեթանոսական գերեզմանները, տարածաշրջանում ամենահարմարն է հողագործության համար, ըստ մեր ուսումնասիրությունների հավանաբար գյուղը մի քանի անգամ վերաբնակեցվել ու լքվել է՝ առայժմ անհայտ պատճառներով 1920-ական թվականներին թուրք բռնավորները այս գյուղից առևանգում են մի գեղեցիկ հայ աղջկա: Ժամանակ անց լքված աղջիկը վերադառնում է տուն: Աղբյուրի մոտ նա մի անգամ լսում է թուրք զինվորների խոսակցությունը, այն մասին, որ մեծավորի հրամանով իրենցից ամեն մեկը գիշերը պետք է մորթի այն հայ տղամարդուն, ում տանը որ ինքը գիշերելու է: Թուրքերեն սովորած հայ աղջիկը լսելով այդ, անմիջապես լուր է տալիս գյուղի քոյիվային: Հավաքվում են գյուղի մեծերը և որոշում թուրք զինվորներին տեղավորել այն տներում, ուր մի քանի տղամարդ կա և գիշերով սպանել նրանց: Այդպես էլ անում են: Եվ այդ օրվանից գյուղը սկսում է կոչվել Ղոնախոռան՝ հյուրասպան: 1944թվականին գյուղը Ավետիք Իսահակյանի միջամտությամբ անվանվել է Շիրակ: Գյուղն ունի մագկենտրոնին միացնող մեկ ճանապարհ, որն անցանելի է տարվա բոլոր եղանակներին: Համայնքում կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և արտահայտվում են բարեխառն՝ երկարատև տաք ամառներով ու ցուրտ ձմեռներով: Համայնքի կլիման, թեև ընդհանուր առմամբ բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ եւ ըստ բարձրության դառնում է ավելի խիստ: Համայնքում տարեկան տեղումների քանակը կազմում է 590 մմ: Համայնքի տարածքում գտնվում է «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Հացիկ- Ջաջուռ կայարանը: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է Ղազանչի եւ Արտեզյան ջրաղբյուրներից: Գյուղի տարածքում գործում է մեկ ուսումնական հաստատություն՝ Շիրակի միջնակարգ դպրոցը, համայնքի տարածքով հոսում է Շիր կանալը:

1.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարմաշեն համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Պատմության մեջ կան փաստեր, որոնք վկայում են Մարմաշեն բնակչության ըմբոստ բնավորության մասին: Ավանդաբար

պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Խոհանոցում պահպանվել են ավանդական ճաշատեսակներ, որոնցով շարունակում են պատվել և զարմացնել հյուրերին: Մարմաշեն համայնքի բնակչությունը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 11045 մարդ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները

(01.01.2018 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը
1.	Մայիսյան	1596 մարդ	515տ/տ.	439 տ/տ.
2.	Կապս	667 մարդ	214 տ/տ.	177 տ/տ.
3.	Վահրամաբերդ	1388 մարդ	460 տ/տ.	438 տ/տ.
4.	Մարմաշեն	1825 մարդ	561 տ/տ.	527 տ/տ.
5.	Հովունի	619մարդ	180 տ/տ.	125 տ/տ.
6.	Քեթի	935 մարդ	321 տ/տ.	296 տ/տ.
7.	Փոքրաշեն	203 մարդ	47 տ/տ.	44 տ/տ.
8.	Հացիկ	966 մարդ	296 տ/տ.	285 տ/տ.
9	Շիրակ	1105 մարդ	303տ/տ	284տ/տ
10	Ջաջուռ	740 մարդ	160տ/տ	147տ/տ
11	Կարմրաքար	43 մարդ	17տ/տ	13տ/տ
12	Լեռնուտ	152 մարդ	42տ/տ	42տ/տ
13	Մեծ Սարիար	372մարդ	92տ/տ	87տ/տ
14	Կրաշեն	240 մարդ	71տ/տ	48տ/տ
15	Ջաջուռավան	194մարդ	70տ/տ	56տ/տ
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	11045մարդ	3349տ/	3008տտ/

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 12147 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 6277 և կանայք՝ 5870: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2018 թ. դրությամբ)**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Այդ թվում՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի										Կարմիրաքար	Լեռնուտ	Մեծ Մարիար	Կրաշեն	Զաջուտական
			Մայիսյան	Կապու	Վահրամանբերդ	Մարմաշեն	Հովունի	Քեթի	Փոքրաշեն	Հացիկ	Շիրակ	Զաջուտ					
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	12147	1857	764	1503	1917	720	991	220	1129	1182	792	57	176	393	249	197
	Տղամարդիկ	6277	972	404	762	969	372	505	128	578	603	421	33	89	205	131	105
	Կանայք	5870	885	360	741	948	348	486	92	551	579	371	24	87	188	118	92
	0-4 տարեկան	618	81	36	69	113	27	58	13	49	76	49	1	8	23	8	7
	5-6 տարեկան	300	44	12	40	70	17	17	6	18	34	18	0	5	11	3	5
	7-10 տարեկան	543	78	32	72	100	29	36	11	46	70	30	0	8	11	11	9
	11-14 տարեկան	441	62	25	69	75	28	28	6	48	43	25	0	3	16	5	8
	15-17 տարեկան	320	54	21	43	72	14	20	10	17	38	15	0	1	7	3	5
	18-22 տարեկան	667	94	44	85	91	51	55	13	54	79	45	1	5	22	14	14
	23-45 տարեկան	4158	578	241	519	679	234	361	76	363	434	274	27	58	141	103	70
	46-62 տարեկան	3324	474	232	400	502	214	300	61	344	272	219	19	57	115	65	50
	63 և բարձր տարիքի	1819	392	121	206	215	106	122	24	190	136	117	9	31	49	72	29

2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	2047	436	139	217	221	131	140	30	214	157	136	16	43	56	80	31
	Տարիքային և աշխատանքային	350	44	18	11	6	25	18	6	24	21	19	7	12	7	8	2
3.	Փախստականներ	2	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1
4.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	31	1	3	3	0	0	11	0	3	4	1	0	1	0	2	2
5.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	7	0	0	0	6	0	0	0	0	0	0	0	1	0	0	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	114	10	4	8	34	7	6	4	6	4	11	2	6	7	5	0
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	139	41	9	10	4	26	3	2	3	4	8	1	4	1	10	13
	Մանկուց հաշմանդամներ	33	3	3	3	2	7	1	2	1	2	1	1	1	0	2	4
9.	Աշխատունակներ	8149	1146	517	1004	1272	499	716	150	761	785	539	47	120	278	182	134
10.	Զբաղվածներ	6194	1055	421	782	1071	403	522	97	512	494	411	24	84	141	91	86
11.	Գործազուրկներ	1955	91	96	222	201	96	194	53	249	291	128	23	36	137	91	48
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգից օգտվող գրանցվա բնակիչների թիվը	318	43	14	43	66	7	23	2	23	40	26	0	4	9	4	14
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	10	2	0	0	1	0	1	1	0	1	2	0	2	0	0	0
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	54	5	3	1	2	0	4	0	5	7	17	2	0	0	2	6
	Անօթևան ընտանիքներ	22	1	3	1	2	0	4	0	1	2	4	1	0	0	2	1
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	73	9	11	0	13	4	8	5	1	1	3	2	2	0	1	13
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	530	40	42	130	41	32	15	3	90	51	30	3	11	13	15	14
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	715	40	52	185	63	41	18	5	130	65	35	4	21	15	21	20

1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Մարմաշեն համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 11 անդամներով (ընտրված Մարմաշեն համայնքի տարբեր բնակավայրերից): Մարմաշեն համայնքի աշխատակազմը բաղկացած է 74 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Մարմաշեն համայնքի Մայիսյան բնակավայրի կենտրոնում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքը նոր է: Համայնքապետարանը հագեցված է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքապետարանն ունի դահլիճ կահավորված նոր գույքով ու տեխնիկայով: Այն ծառայում է որպես քաղաքացիների սպասարկման գրասենյակ (քաղաքացիները սպասարկվում են մեկ պատուհանի սկզբունքով):


Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբեր 25 ի թիվ 11-Ա որոշմամբ (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Մարմաշեն համայնքի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	350.000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	260.000
3.	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	1	170.000
4.	Համայնքի ղեկավարի օգնական	1	1	160.000
5.	Վարչական ղեկավար /1001-ից ավել բնկաչություն/	4	4	640.000
6.	Վարչական ղեկավար /501-1000-ից բնկաչություն/	4	4	560.000
7.	Վարչական ղեկավար /մինչև 500 բնկաչություն/	6	6	720.000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
8.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	280.000
9.	Գլխավոր մասնագետ	7	7	1.284.500
10.	Առաջատար մասնագետ	5	5	800.000

11.	Առաջին կարգի մասնագետ/Մայիսյան/	4	4	532.000
12.	Առաջին կարգի մասնագետ/ Վահրամաբերդ, Կապս, Քեթի, Հովունի, Հացիկ, Մարմաշեն, Շիրակ, Զաջուռ/	8	8	1.064.000
13.	Երկրորդ կարգի մասնագետ /Փոքրաշեն, կարմրաքար, Լեռնուտ, Մեծ Սարիար, Կրաշեն, Զաջուռավան/	6	6	660.000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
14.	Գրադարանավար (Մայիսյան)	1	1	80000
15.	Գրադարանավար(Վահրամաբերդ, Կապս, Հացիկ, Քեթի, Շիրակ)	5	5	400000
16.	Ակումբավար /Մայիսյան/	1	1	90.000
17.	Ակումբավար /Վահրամաբերդ/	1	1	90.000
18.	Գործավար	1	1	110.000
19.	Վարորդ	1	1	120.000
20.	Տնտեսավար	1	1	110.000
21.	Հավաքարար (Մայիսյան, Վահրամաբերդ)	1	1	80000
22.	Հավաքարար (Հովունի, Կապս, Քեթի, Մարմաշեն, Հացիկ, Շիրակ, Զաջուռ,)	7	3.5	280.000
23.	Զրագծերը սպասարկող վարպետ	2	2	220.000
24.	Բակապահ/Մայիսյան/	1	1	80.000
25.	Բակապահ /Վահրամաբերդ/	1	1	80.000
26.	Էլեկտրիկ	1	1	120.000
	Ընդամենը	74	69.5	9.340.500

Գծապատկեր 1. Մարմաշեն համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը



Համայնքային ոչ առևտրային 3 կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 13-Ա, թիվ 14-Ա և թիվ 15-Ա որոշումներով:

Աղյուսակ 5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Վահրամաբերդի երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	1	82000	82000
2.	Հաշվապահ	0.25	1	80000	20000
3.	Դաշնամուրի դասատու	1	1	80000	80000
4.	Սոլֆեջիոյի դասատու	1	1	80000	80000
5.	Դիոլի դասատու	1	1	80000	80000
	Ընդամենը	4.5	5	402000	342000

Աղյուսակ 6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մայիսյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	1	110000	110000
2.	Հաշվապահ	0.5	1	74074	37037
3.	Դաստիարակ	1	1	100000	100000
4.	Դաստիարակի օգնական-հավաքարար	1	1	74074	74074
5.	Դաշնակահար	1	1	80000	80000
6.	Խոհարար	1	1	74074	74074
	Ընդամենը	5.5	6	512222	475185

Աղյուսակ 7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մարմաշենի արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	1	82000	82000
2.	Հաշվապահ	0.25	1	80000	20000
3.	Քանոնի և սոլֆեջիոյի դասատու	1	1	80000	80000
4.	Զուլթակի դասատու	1	1	80000	80000
5.	Դուդուկի դասատու	1	1	80000	80000
6.	Դիոլի դասատու	0.5	1	80000	40000
7.	Դաշնամուրի դասատու	1	1	80000	80000

8.	Դաշնամուրի դասատու	1	1	80000	80000
9.	Հավաքարար	0.5	1	80000	40000
	Ընդամենը	7.25	8	722000	562000

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ

- ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
- բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
- գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
- դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
- ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 2-ում բերված է 01.01.2018թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի: Ի լրումն նշյալ ցանկի, բերված է նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը:

Հավելված 3-ում ամփոփ ձևով ներկայացված է համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը:

1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարմաշեն համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները ըստ բնակավայրերի ներկայացված են **հավելված 4**-ում: Նշված կազմակերպությունների հետ ՏԻՄ-երի համագործակցությամբ արվում է ամեն հնարավորը տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբը տեղափոխվում և կուտակվում է ոչ կենտրոնացված աղբավայրերում, որտեղ պարբերաբար կատարվում են բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է ոչ բավարար տեխնիկայի պայմաններում: Փողոցներում աղբամաններ տեղադրվել են քիչ չափով, որտեղից աղբահավաք մեքենան հավաքում է: Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 15 %-ը: Բնակավայրերում լուսավորության ցանցը կառուցված է մասամբ, իսկ որոշ բնակավայրերում ընդհանրապես բացակայում է: Համայնքի լուսավորությունն առաջնային կարևորության հարցերից է և անհրաժեշտ է կտրուկ ընդլայնել լուսավորության ցանցը:

Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը:

Բնակավայրերում առկա է գերեզմանատների ցանկապատման կամ եղած ցանկապատերի թարմացման խնդիր: Համայնքի բոլոր բնակավայրերում բնակելի տները առանձնատներ են բացառությամբ Վահրամաբերդ բնակավայրի ԼԵՆ-ԳԷՍ թաղամասի 4 բազմաբնակարան եռահարկ բնակելի շենքերի:

Աղյուսակ 11. Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Բազմաբնակարան բնակելի շենքերի		Բնակելի առանձնատների	
		Թիվը	բնակարանների թիվը	թիվը	ընդհանուր մակերեսը
1.	Մայիսյան			439	57070
2.	Կապս			177	26550
3.	Վահրամաբերդ	4	84	438	61320
4.	Մարմաշեն			527	79050
5.	Հովունի			125	18750
6.	Քեթի			205	24600
7.	Փոքրաշեն			40	5200
8.	Հացիկ			285	34200
9.	Շիրակ			284	28400
10.	Զաջուռ			168	21840
11.	Կարմրաքար			18	1980
12.	Լեռնուտ			42	4200
13.	Մեծ Սարիար			87	11310
14.	Կրաշեն			48	6504
15.	Զաջուռավան			56	6160

1.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 19257,91 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 14438,17 հա, բնակավայրերի հողերը՝ 1198,49 հա, արտադրական նշանակության հողերը՝ 443,83 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 325,8հա, անտառային հողերը՝ 1331,38 հա, հատուկ պահպանության հողերը՝ 178,99 հա, հատուկ նշանակության հողերը՝ 1204,05 հա և ջրային հողերը՝ 137,20 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափն ըստ բնակավայրերի ներկայացված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը /հա/

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Մեկ հողաբաժնի չափը	Այդ թվում՝		
			վարելահող	տնամերձ	խոտհարք
1.	Մայիսյան	0.8	0.65	0.15	0
2.	Կապս	0.8	0.6	0.2	0

3.	Վահրամաբերդ	0.75	0.63	0.12	0
4.	Մարմաշեն	0.72	0.6	0.12	0
5.	Հովունի	1.4	1.2	0.2	0
6.	Քեթի	1.4	1.28	0.12	0
7.	Փոքրաշեն	1.2	1.0	0.2	0
8.	Հացիկ	1.28	1.13	0.15	0
9.	Շիրակ	1.9	1.7	0.2	0
10.	Զաջուռ	1.0	0.88	0.12	0
11.	Կարմրաքար	5.0	4.8	0.2	0
12.	Լեռնուտ	1.35	1.1	0.25	0
13.	Մեծ Սարիար	2.5	1.25	0.25	0
14.	Կրաշեն	1.4	1.2	0.2	0
15.	Զաջուռավան	0	0	0	0

Համայնքի հողային հաշվեկշիռն ըստ առանձին բնակավայրերի ներկայացված է **հավելված 5-ում**:

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Մարմաշեն համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում:

Համայնքաբնակների զգալի մասը զբաղվում է մեղվապահությամբ, սակայն տարիների կտրվածքով մեղվի համար եղանակային պայմանները լավ են լինում մեկընդմեջ:

Համայնքաբնակները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և բազմատեսակ պտուղներ: Մարմաշեն համայնքում ոռոգման ջուրը սպասարկվում է «Ախուրյան» ՋՕԸ-ի կողմից:

Հավելված 6-ում ներկայացված է համայնքում առկա անասնազոյաքանակի վերաբերյալ տվյալներն՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի:

1.8 *ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքումը: Մարմաշեն համայնքի կազմի մեջ մտնող ոչ մի բնակավայր չունի կոյուղաջրի մաքրման կայան՝ կոյուղու կոլեկտոր: Համայնքը չունի կենտրոնացված աղբավայր:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կառուցել կոյուղու գլխավոր կոլեկտոր,
- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- ավելացնել և բարեկարգել զբոսայգիներն ու խաղահրապակները,
- կառուցել կենտրոնացված աղբավայր,
- փողոցներում տեղադրել աղբամաններ,
- կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույլատրված նորմերում կատարելու

համար,

- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.9 *ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՏՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Մարմաշեն համայնքն ունի 63.5 կմ երկարությամբ միջբնակավայրային ճանապարհներ, 107.5 կմ երկարությամբ փողոցներ (ներբնակավայրային ճանապարհներ), մոտ 720 կմ երկարությամբ դաշտամիջյան ճանապարհներ: Ճանապարհների և փողոցների մեծ մասն անբարեկարգ է: Ճանապարհները հիմնականում գրունտային և խճապատ են, որոնք էլ լինելով թեքությունների վրա, հաճախակի տեղացող հորդառատ անձրևների պատճառով ամբողջովին քայքայվում են և որոշ տեղերում դառնում դժվար կամ գրեթե անանցանելի: Համայնքի տարածքում ճանապարհներից ասֆալտապատ է միայն՝ Գյումրի-Կապս-Ամասիա, Գյումրի-Աշոցք-Բավրա և Գյումրի-Վանաձոր, ավտոմայրուղիները:

Համայնքում միջբնակավայրային տրանսպորտ չի գործում՝ բացառությամբ Հովունի-Մայիսյան, Փոքրաշեն-Քեթի-Մայիսյան ուղղությունների, սակայն եղած սեփական ավտոմեքենաների թիվը բավականացնում է մարդկանց բնականոն տեղաշարժին:

Համայնքի որոշ բնակավայրերում տեղադրված կանգառներ չկան, անհրաժեշտ է տեղադրել բազմաֆունկցիոնալ կանգառներ (ներառյալ ինֆորմացիոն վահանակներ՝ համայնքում մատուցվող ծառայությունների և այլնի մասին, ցուցանակներ, համայնքում գտնվող պատմամշակութային և հետաքրքրաշարժ վայրերի քարտեզներ), որոնք էլ ավելի կխթանեն զբոսաշրջության զարգացումը:

Համայնքի ներբնակավայրային փողոցների և համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի ներկայացված է **հավելված 2**-ում: Համայնքաբնակների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների նկարագիրն ու քանակները ներկայացված են **հավելված 7**-ում:

1.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարմաշեն համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ, հացի փոեր, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն):

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են **հավելված 8**-ում՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի:

1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարմաշեն համայնքում գործում են հանրակրթական միջնակարգ՝ 12 և հիմնական՝ 1, տարրական 1 դպրոցներ: Համայնքում գործում են 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն (Մայիսյան), 1 երաժշտական դպրոց (Վահրամաբերդ), 1 արվեստի դպրոց (Մարմաշեն): Համայնքի բոլոր ՆՈՒՀ-երն աշխատում են 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երկանգամյա սնունդ: Ավագանու որոշմամբ ՆՈՒՀ-երում ծնողական վճարի չափը սահմանված է 4000 (չորս հազար) դրամ: Երաժշտական դպրոցում և արվեստի դպրոցում ծնողական վճարի չափը սահմանված է 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ: Աղյուսակ 13-

ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 13. Մարմաշեն համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների և երաժշտական դպրոցի վերաբերյալ ցուցանիշներն ըստ առանձին բնակավայրերի

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում	Մայիսյան	Կապս	Վահրամաբերդ	Մարմաշեն	Հովունի	Քեթի	Փոքրաշեն	Հացիկ	Շիրակ	Զաջուռ	Կալմուխաթալ	Լեռնուտ	Մեծ Սարիսար	Կրաշեն	Զաջուռավան
1.	Դպրոցներում աշխատողների թիվը, որից	315	32	23	31	34	19	29	20	24	31	28	0	11	16	13	4
	Մանկավարժներ	232	27	15	25	22	9	22	13	20	24	21	0	8	15	8	3
2.	Աշակերտների թիվը	1030	141	64	136	207	48	70	18	90	109	72	0	5	52	14	4
3.	ՆՈՒՀ-երում աշխատողների թիվը	6	6														
4.	ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների թիվը	25	25														
5.	Երաժշտական դպրոցում աշխատողների թիվը	5			5												
6.	Երաժշտական դպրոց հաճախող երեխաների թիվը	20			20												
7.	Արվեստի դպրոցում աշխատողների թիվը	9				9											
8.	Արվեստի դպրոց հաճախող երեխաների թիվը	35				35											

1.12 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍՄԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքը հարուստ է պատմամշակութային կոթողներով <<Մարմաշեն>> միջնադարյան վանքը գտնվում է Շիրակի մարզի Վահրամաբերդ բնակավայրից 2 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Ախուրյանի ձորում՝ Ներքին Ղանիձա գյուղատեղում:

Վանքը բաղկացած է 2 խումբ հուշարձաններից: Հիմնական խումբը Մեծ Մարմաշենն է, որի կազմի մեջ մտնում են 4 եկեղեցիներ, գավիթ, դամբարան, գերեզմանատուն: Մյուս խումբը՝ Վերին կամ Փոքր Մարմաշենը, կազմված է մեկ եկեղեցուց և գերեզմանատնից: Այսպես, Մարմաշենի սուրբ և տիեզերահոչակ ուխտը մեծ ջանքերով ու բազում ծախսերով կառուցել է Գրիգոր Լուսավորիչի տոհմից սերած, իշխանաց իշխան Գրիգոր Համգեի որդի Վահրամ Պահլավունին՝ 988-1029 թվականներին: Սելջուկյան արշավանքներից Մարմաշեն վանքը զգալի ավերվել է: 1225 թ.-ին Վահրամ Պահլավունու թոռներ Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայր Ղարիբը վերանորոգել են Կաթողիկեն: Ի տարբերություն VII դ նույնատիպ կառույցների, արևելյան խաչաթևը կրճատված է, խորանը իր հարակից երկու ավանդատնով մոտեցվել է գմբեթատակ տարածությանը, որի շնորհիվ գմբեթը շենքի արտաքին ծավալում գրավել է կենտրոնական դիրք: Արևելյան խորանը, ինչպես Անիի Մայր տաճարում, մշակված է որմնախորշերով: Ճակատները մշակված են խոր լուսաստվեր ստեղծող եռանկյունաձև խորշերով: Մարմաշենի վանքի Կաթողիկեն հայկական ճարտարապետության Բագրատունիների ժամանակաշրջանի լավագույն կառույցներից է: Վանքի երկրորդ եկեղեցին Կաթողիկեից հյուսիս է, գրեթե նրան կից և հավանաբար, վերջինիս հետ միաժամանակ է կառուցվել և իրենից ներկայացնում է Կաթողիկեի փոքրացված ընդօրինակությունը թե՛ հորինվածքով (գմբեթավոր դահլիճ), թե՛ ճարտարապետական մանրամասներով ու հարդարանքով: Երրորդ եկեղեցին (XI դ) Կաթողիկեից հարավ է: Այն, չորս անկյուններում ավանդատներով, կենտրոնագմբեթ կառույց է: Կաթողիկեն արևմուտքից կից է, XIII դ. այդ շինություններին բնորոշ, չորս սյուներով, կենտրոնակազմ հորինվածքով գավիթը (պահպանվել են պատերի ստորին մասերը և սյուների՝ հրդեհից ճաքճքված խարխիսները): Ծառայել է որպես տապանատուն, այստեղ է թաղված Վահրամ Պահլավունին, որի այժմյան տապան\աքարը ստեղծվել է XIX դ.-ում: Գավթից հարավ-արևմուտք 1954-1956 թթ պեղումներից բացվել է վանքի չորրորդ եկեղեցին՝ արտաքուստ կլոր, ներսից չորս փոքրիկ ավանդատներով: Պահպանվել են նրա բարձր միաստիճան գետնախարիսխը և պատերի ստորին երկու շարքերը: Համալիրի

արևելքում և հարավում գերեզմանատունն է: Վանքն ունեցել է իր ջրմուղը, որի հատվածները հայտնաբերվել են գավթից արևմուտք: Փոքր Մարմաշենը կամ Վերին վանքը Մեծից հյուսիս է, բլրակի վրա: Մարմաշենի վանքը եղել է Հայաստանի կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոն, այն հայկական հոգևոր և ճարտարապետության արժեքավոր համալիրներից է: Մարմաշենի հուշարձանների այս խումբը շրջափակված է եղել սրբատաշ պարսպապատով, որը ձգվել է մինչև Ախուրյան գետի ափերը: Եկեղեցուց ոչ հեռու պահպանված է նաև դեպի Անի տանող, 10-րդ դարում կառուցված կամրջի աջափնյա խելի մնացորդները: Այդ կամրջի վրայով է անցել միջազգային տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհների՝ Շիրակի սահմաններով անցնող ուղեգծի այն հատվածը, որը Թալինի մեծ իջևանից հետո իջնում էր Ներքին Ջրափի իջևանը և անցնում Երազգավորք-Շիրակավան գյուղաքաղաքով: Բագրատունյաց Անի մայրաքաղաքն ու սպարապետության նստավայր Մարմաշեն դաստակերտը զարգանում ու ծաղկում էին զուգահեռ՝ շնորհիվ աշխարհահռչակ Տրդատի, որը հեղինակ է Անիի մայր տաճարի և Մարմաշեն կաթողիկե եկեղեցու: Բագրատունիների ու Պախլավունիների կապը ի սկզբանե շատ սերտ է եղել: Կան պահպանված բազմաթիվ լեգենդներ, որոնցից մեկի համաձայն գոյություն է ունեցել Մարմաշեն-Անի ստորգետնյա ուղի, որը Բագրատունի թագավորի ու սպարապետի միջև գաղտնի կապի միջոց է հանդիսացել:

Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունը՝ Մարմաշենի վանքի մոտակայքում. Հնագիտական այլ արժեքներ

Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում բնակավայրեր են հիմնադրվել դեռևս հազարամյակներ առաջ: Մարգի տարածքում հայտնաբերվել են մ. թ. ա. 3-րդ հազարամյակից մինչև ուշ միջնադարին վերաբերող հնագիտական հուշարձաններ, բրածո կենդանիների մնացորդներ, կավե ու բրոնզե իրեր, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի գործիքներ ու զենքեր: Որպես մարդկության հինավուրց օրրանի մեկ այլ վկայություն է Մարմաշենի մերձակայքում պահպանված սեպագիր արձանագրությունը: Դա Ուրարտուիթագավոր Արգիշտի առաջինի արձանագրությունն է, որտեղ ասվում է, որ «Արգիշտին գրավեց Երիախե երկիրը, Իրդաինու բնակավայրը, հասավ մինչև Իշկուգուլու»: Երիախեն այսօրվա Շիրակն է, Իրդաինուն՝ Գյումրին կամ նրա շրջակա տարածքը, իսկ Իշկուգուլուն Աշոցքն է: Պետք է հաշվի առնել, որ Արգիշտին գրավել էր վաղուց արդեն գոյություն ունեցող և ժամանակի չափանիշներով՝ հիշատակման արժանի խոշոր բնակավայրեր: Արգիշտին գրավել է Երիախե

երկիրը, սակայն հետագայում ուրարտական արշավանքները շարունակվել են դեպի այս տարածքներ:

Մարմաշենը և սպարապետ Վահրամ Պահլավունին /10-րդ դար/

Երբ 885 թվականին Բագրատունիները վերականգնեցին հայոց պետականությունը, սկզբում սպարապետությունը պաշտոնավարում էին արքայի եղբայրները: Ավելի ուշ, պետության համախմբվածությունն ամրապնդելու նպատակով, այն հանձնվեց Պահլավունիներին: Նախարարական տանը, մի շարք տարածքների հետ, հատկացվեց նաև Շիրակ գավառը: Պատմահայր Մովսես Խորենացին հաղորդում է, որ Պահլավունիների տոհմը պարթևական ծագմամբ հայացած ճյուղ է: Մեզ հասած տվյալներով՝ Մարմաշենի հոգևոր և աշխարհիկ զարթոնքը եղել է հենց 10-րդ դարում, երբ հայոց Վահրամ Պահլավունի սպարապետը շինարարական աշխույժ գործունեություն է ծավալել: Ենթադրություն կա, որ 10-րդ դարում Պահլավունու ամրոցի դիմաց եղել է ինչ-որ պարտեզ՝ շինություններով: Եթե այդպես է, հնարավոր է ամրոցը կառուցելիս ավերվել են ավելի վաղ շերտի կառույցները: Համենայն դեպս, այնտեղ լուրջ պեղումներ չեն կատարվել, որ հստակ նշվի՝ տարածքում ուրարտական կառույցներ կան, թե ոչ:



<<Մարմաշեն>> վանական համալիրի հոգևոր նշանակությունն անցյալում և ճարտարապետական արժեքն՝ այսօր

Շիրակի մարզում բավականին լավ պահպանված հուշարձաններից է <<Մարմաշենի>> վանական համալիրը: Այս խոշոր վանական համալիրը մեծապես նպաստել է հայ հոգևոր կյանքի զարգացմանը: Մեծ եկեղեցին կրում է Աստվածամոր անունը: Հավանաբար այստեղից էլ գալիս է ընդհանուր համալիրի, նաև մոտակա գյուղի անվանումները: Ըստ որոշ կարծիքների՝

«Մարմաշեն» անվանումը «Մարիամաշեն» բառի ձևափոխումն է: Իսկ հնավայրի մյուս՝ «Վահրամաբերդ» անվանումը ենթադրել է տալիս, որ այստեղ եղել է նաև իշխանական նստավայր:



Պահպանված եկեղեցիներից բացի, եղել է նաև զվարթնոցատիպ տաճար: Այն ավերված է եղել անհիշելի ժամանակներից: Մինչև 1938 թվականն անգամ հայտնի չի եղել, որ համալիրում այսպիսի շինություն է եղել: Մինչ այդ վանքի տարածքն ընդգրկվել է գյուղի մեջ, իսկ զվարթնոցատիպ տաճարի ավերակները եղել են տներից մեկի գոմի տակ: 1950-ականներին այստեղ առաջին պեղումներն են իրականացվել, երբ գյուղն արդեն տեղափոխվել էր ավելի վեր: Ավելի ծավալուն աշխատանքներ իրականացվել են 1970-ականների սկզբից՝ հնագետ Սերգեյ Հարությունյանի գլխավորությամբ և տևել է մոտ 10 տարի:



Աստվածածին եկեղեցուն կից, նրանից մոտ երկու դար անց կառուցվել է գավիթ, որտեղ, դրված տապանաքարի արձանագրության համաձայն՝ ամփոփված են 1045 թվականին թուրքաց դեմ պատերազմելիս զոհված Վահրամ Պահլավունու նշխարները: Գավիթն այսօր չկա, սակայն

եկեղեցու պատերին նկատելի են նրա հետքերը: Ամենայն հավանականությամբ, համալիրը պատկանում է Տրդատ ճարտարապետի թողած արժեքների շարքին: Համեմատելով այն տաճարների հետ, որոնք պատմական տվյալներով, նրա ստեղծագործություններն են, նկատելի են նույն ձեռագրային նրբությունները: <<Մարմաշենի>> վանական համալիրը, ինչպես և Շիրակ աշխարհի այլ հնագույն հուշարձաններ, պատկերացում է տալիս Անի-Շիրակ ճարտարապետական դպրոցի ավանդույթների և լուծումների մասին:



Համալիրի հիմնական կառույցները զարդարված են կամարային խորշերով և կեղծ կամարներով: Ի դեպ, նմանատիպ տաճարներ կան Պիզայում՝ Կամպոսանտո անունով, Ֆրանսիայի Սուանսոն քաղաքում: Դրանք նույնպես դրսից կեղծ կամարներ ունեն: Այսօր դժվար է ասել, թե այդ տաճարները կառուցողներն օգտվե՞լ են արդյոք հայ ճարտարապետության առանձնահատկություններից, բայց <<Մարմաշենի>> եկեղեցին կառուցված է դրանցից մի քանի դար ավելի վաղ:

11-րդ դարից սկսվում են սելջուկյան արշավանքները, որոնց հաջորդում են այլ նվաճողների ասպատակությունները: Այս ընթացքում Շիրակ գավառը հայաթափվում է: Բնակիչները մեծ մասամբ գաղթում են դեպի Ղրիմ, հետագայում՝ նաև Ռուստով: Լքվում են հոգևոր կյանքի երբեմնի խոշոր կենտրոնները, այդ թվում՝ Մարմաշենը: 19-րդ դարասկզբին արդեն այն ամայացած էր, ինչպես Հառիճը: Եթե միջնադարում այն եղել է հոգևոր կյանքի աշխույժ կենտրոն, ապա հետագայում վերածվել է գյուղական եկեղեցու: Այսօր Մարմաշենը չի գործում իբրև վանական համալիր և տարածքն էլ եկեղեցապատկան չէ: Հայ Առաքելական

Եկեղեցին այստեղ իրավունք ունի ընդամենը պատարագ մատուցել, ժամերգություն, պսակադրություն և մկրտություն կատարել:



Վահրամաբերդ բնակավայրում **մշակույթի տունը** կառուցվել է 2012 թվականի փետրվար ամսին՝ երկրաշարժից փլված ակումբի շենքի տեղում, որից միայն պահպանվել էր Մինաս Ավետիսյանի «Հայաստան» որմնանկարը:



Քեթի բնակավայրում պահպանվել են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակների կիկլոպյան ամրոցի, դամբարանադաշտերի և բնակատեղիների, 5-19-րդ դարերի և 11-20-րդ դարերի եկեղեցիների և մատուռների հետքերը, 7-20-րդ դարերի և 19-20-րդ դարերի գերեզմանոցները վկայում են գյուղի՝ որպես բնակատեղի, հազարամյա պատմության մասին: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հնագիտական բարձրարժեք դրածոներ:

Գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք «Քարոտ հողեր» հանդամասում հայտնաբերվել է դամբարանադաշտ: Այստեղ է գտնվում մ.թ.ա. 5-4-րդ դարերի «Զորանոց» ամրոցը: 1969-70 թվականներին Քեթի գյուղի դաշտերում և Շիրակի լեռնաշղթայի եզերող փեշերին

երկրագործական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են հնագիտական արժեքավոր նյութեր, որոնք պեղումների պատճառ դարձան:

1970թ. Մայիսին ՀՍՄՀ գիտությունների և ազգագրության ինստիտուտի ջոկատը՝ Ռ. Թորոսյանի և Լ. Պետրոսյանի (ծնունդով Քեթեցի) մասնակցությամբ մանրամասն ուսումնասիրելով Քեթիի հանդամասերը, հայտնաբերեց նախնադարյան պատմության մի շարք հետաքրքիր հուշարձաններ՝ դրանցից առաջինը վաղ բրոնզե դարյան (մ.թ.ա. 3-րդ հազ.) բնակատեղի է, որը գտնվում է գյուղից 500մ հարավ-արևելք, **«Քիրաջիսարի»** ստորոտում:

Վաղ բրոնզեդարյան մշակույթի այս համալիրն ամբողջանում է դամբարանադաշտով, որը գտնվում է բնակատեղիից շուրջ 100մ հարավ-արևմուտք: Գյուղից մոտ 2կմ հյուսիս-արևմուտք՝ շրջակայքի հարթության նկատմամբ գերիշխող դիրք ունեցող բարձրունքի վրա, ժամանակին կառուցված է եղել մի հզոր կիկլոպյան ամրոց, որին տեղացիները **«աղնախներ»** են անվանում: Այն զբաղեցնում է երկու հեկտարից ավելի տարածություն և բաղկացած է երկու մասից՝ վերին և ներքին ամրոցներից: Վերին ամրոցի պարիսպները շարված են բնական անմշակ որձաքարերով, որոնց պահպանված մնացորդները այժմ գետնի մակերեսին երևում են 50-80 սմ բարձրությամբ: Վերին ամրոցից 100մ ներքև, արևելյան կողմում մեկ այլ բարձրության վրա տեղավորված է ներքին ամրոցը, որն իր չափերով մի քանի անգամ փոքր է վերինից: Սա առանձին կառուցվածք է, իր պարիսպներով և մի քանի քառակուսի կացարաններով: Ներքին ամրոցը իր նշանակությամբ ծառայել է որպես ամրությունների ընդհանուր պաշտպանական համակարգ: Ամրոցի ստորոտին հայտնաբերվել է դամբարանադաշտ, որտեղ մոտ ութ դամբարաններով, որոնցից մեկի պեղման ժամանակ հայտնաբերվել է ձիակառքով հարուստ թաղում, թաղվել են նաև սպանված ձիերը:

Հացիկ բնակավայրից մոտ 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է **«Յոթաղբյուր» մատուռը**, իսկ գյուղում կա «Բլուկ» եկեղեցի (1890 թ.): 19-րդ դարի վերջում կառուցված **«Սուրբ Հակոբ»-ը բազիլիկ** եկեղեցի է, որը քանդվել է 1988 թվականի երկրաշարժի ժամանակ: Սրբատաշ քարերով շարված եկեղեցին, թեև վերանորոգվել էր 20-րդ դարում, այժմ (2015 թ.) կիսավեր է՝ ծածկն ամբողջովին փլված է, կանգուն են միայն պատերը:

Դուռը բացվում է հարավային կողմից: Հյուսիսային կողմի խորանով և մկրտության ավազանով: Աստվածամերժության տարիներին այս եկեղեցին օգտագործվել է, որպես հացահատիկի պահեստ, կինոդահլիճ: Հացիկ գյուղից մեկ կիլոմետր հյուսիս-արևելք՝ ձորակի մեջ, պահպանվել է հին գյուղատեղի՝ դարավանդի ձևով: Այստեղ է եղել 7-րդ դարի եկեղեցի, որի

հիմնապատերի վրա սովորական մատուռ են կառուցել՝ այն դարձնելով սրբավայր-ուխտատեղի։ Ուխտատեղին «Ծակքար» անունն է կրում։ Նրա մոտ է գտնվում «Յոթեղբայր» կոչվող գերեզմանը, որը նույնպես սրբավայր է։

Հացիկ-Կարմրաքար ճանապարհին Բնության հուշարձան Ծակ քար



Շիրակ բնակավայրում են 19-րդ դարի Սբ. Հակոբ եկեղեցին և 19-րդ դարի Սբ. Մինաս մատուռը, ինչպես նաև Սբ. Նշան մատուռը։ Գյուղի կենտրոնում կա հուշադրյուր։ Ջաջուռ բնակավայրում պահպանվել են 19-րդ դարի գերեզմանոց և 20-րդ դարի կիսակառույց եկեղեցի։ Գյուղում է գտնվում 13-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցին։ Ջաջուռի եկեղեցին, կառուցվել է 1911 թվականին։ Ջաջուռ գյուղում ծնվել է նկարիչ Մինաս Ավետիսյանը։

Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան (Ջաջուռ)



Նկարչի տուն-թանգարանը հայրենի Ջաջուռ գյուղում բացվել է 1982 թ. հուլիսի 21-ին։ 1988-ի ավերիչ երկրաշարժից այն հիմնովին ավերվել է։ Վերաբացվել է 2005-ին։

Ներկայումս թանգարանում ցուցադրվում է 30-ից ավելի բնօրինակ կտավ, որը Մինաս Ավետիսյանի ստեղծագործությունների ցուցադրվող ամենամեծ հավաքածուն է։

2010-ին թանգարան է տեղափոխվել «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարը: Մեծ Սարխար բնակավայրում պահպանվել են Սբ.Խաչ Եկեղեցին 1907թ., Գերեզմանոց 18-20դդ., եկեղեցուն կից զանգակատուն 18-19դդ գյուղում կա հուշաղբյուր 1946թ. և հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին նվիրված:

Փոքրաշեն բնակավայրում պահպանվել են հին գյուղատեղի, Սբ. Հակոբ եկեղեցի (1890 թ.) և Սբ.Հակոբ մատուռ:

Հովունի բնակավայրում պահպանվել են միջնադարի «Սրբի Սար», «Նարեկ», «Սրբատեղ» մատուռները, խաչքարերով գերեզմանոցը և 19-րդ դարի «Կարմիր Կող Ավետարան» եկեղեցին:

Լեռնուտ բնակավայրում պահպանվել են 19-րդ դարի «Ժամ» եկեղեցին, հարևանությամբ Նարեկ, Շեկ Ավետարան, Գրիգոր Նարեկացի սրբատեղին:

Կրաշեն բնակավայրում պահպանվել է 1859 թ.-ի Սբ. Աստվածածին եկեղեցին: Մայիսյան բնակավայրի հիմնադրումը պատմագրության մեջ նշվում է 7-րդ դարից, որի հիմնադիրը եղել է Շարա իշխանը: Գյուղի կենտրոնում է գտնվում VII դարի Տիրանավոր Սբ. Աստվածածին եկեղեցին և Սբ. Ավետարան մատուռը:

Կարմրաքար բնակավայրը տարբեր ժամանակներում հայտնի է եղել նաև Դարբանդ, Դերբենդ, Դարաբանդ անվանումներով, որը ունի պարսկական ծագում և նշանակում է «Ժայռերի մեջ»: Պատմական աղբյուրներում «Դարբանդ» բնակավայրի մասին տեղեկությունները սակավ են:

Հատկապես ուշագրավ և հետաքրքրական են գյուղում գտնվող քառակող կոթողների բեկորները՝ պատված մարդկանց դիմանկարներով և այլ զարդաքանդակներով (5-7դդ.): 1913թ. դեկտեմբերի 18-ին Թ. Թորամանյանը Ալեքսանդրապոլից պրոֆեսոր Մառին հասցեագրված նամակում գրում է. «Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղու գծին հյուսիսային կողմը, քաղաքեն 10-12 կիլոմետր հեռավորության վրա, կա Դարբանդ անունով մի գյուղ լսելով, որ այնտեղ հնություններ կան, գնացի տեսնելու: Կանգուն կամ կիսականգուն շինություններ չկան այնտեղ. շատ կան հեթանոսական գերեզմաններ: Ես գնացի հայոց գերեզմանատունը, որ ի հնումն ալ գերեզմանատուն է եղած: Այդ գերեզմանատան մեջ գտա քանի մը հատ հին գերեզմանաքարեր, Հառիճի կոթողին նման, միայն թե չափազանց մաշված, տեղե տեղ փոխադրված, որոնց վրա թե մարդոց և թե ուրիշ զանազան քանդակներ կան: Մինչև այժմ իմ տեսածս այս ձևի քարերը քանդակված էին միշտ քրիստոնեական խորհրդանշաններով և սրբոց պատկերներով: Դարբանդի քարերը քրիստոնեական խորհրդանշաններ չկրելեն զատ, ավելի մոտ

նմանություններ ցույց կուտան կարծեք հեթանոսական քանդակներու: Դարբանդի մարդու քանդակը թեև անասունի կամ գազանի գլուխ ունի»:

2005 թ. գարնանը **Կարմրաքար** գյուղի տարածքում հնագիտական հետախուզությունների արդյունքում հայտնաբերվեց նոր հնավայր: Այն գտնվում է գյուղը արևելյան կողմից եզերող գետակի հակադիր, բարձրադիր ափին, որն ընդգրկում է մոտ 10 հեկտար հարթ մակերեսով տարածք: Բացվեցին կիսավեր դամբարաններ, իսկ փլուզված ու փոսերի մեջ լցված հողի միջից հայտնաբերվեցին վաղ բրոնզի և երկաթի ժամանակաշրջաններին վերաբերող խեցեղենի բեկորներ և այլ նյութեր, որոնք համապատասխանում են մ.թ.ա. 8-7-րդ դդ.: Կիսավեր դամբարանը հյուսիս-հարավ կողմնորոշմամբ ուղղանկյուն խուց է (երկ.՝ 240սմ, լայն.՝ 160սմ, խոր.՝ մոտ 150սմ), իսկ որպես ծածկասալ ծառայել են իրար զուգահեռ դրված երկու սալերը: Բացի մեծահասակի ոսկորներից հայտնաբերվել են նաև երեխայի մի քանի կաթնատամներ: Հավանաբար, թաղման խցում եղել է երկու կմախք: Դամբարանից գտնված հիմնական նյութը խեցեղենն է, կան նաև աշխատանքային գործիքներ և արդուզարդի պարագաներ: Կառուցվածքն ու հայտնաբերված նյութերը թույլ են տալիս Կարմրաքարի դամբարանն ու դամբարանադաշտը դասել Հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. 8-7-րդ դդ. հուշարձանների շարքին: Գյուղի մոտակայքում պահպանվել է հսկայական անտաշ քարերով շինված ուրարտական ամրոցի մի պատ:

Կարմրաքարը հարուստ է նաև պատմամշակութային այլ հուշարձաններով: Գյուղի հարավային կողմում է գտնվել մ.թ.ա. 3-1-րդ հազարամյակի բնակատեղի և մ.թ.ա. 3-րդ հազ.-մ.թ. 4-րդ դարի դամբարանադաշտ: Գյուղի հարավային եզրին պահպանվել են 5-6-րդ դդ. հին և 19-րդ դարի. եկեղեցիներ: Իսկ գյուղատեղիի հյուսիսային եզրին գտնվող գերեզմանոցում պահպանվել են նաև 17-18-րդ դարերի ձկնաձև տապանաքարեր:

Կապս բնակավայրում պահպանվել են 1860թ-ին կառուցված «Ժամ» եկեղեցին, որը հետագայում վերանորոգվել է Տեր-Թորոս քահանայի կողմից: Պահպանվել է նաև Սրբի սար և Սրբատեղի մատուռները:

Համայնքային պատկանելիության մշակութային կառույցներից որոշները վթարային են՝ չգործող: Նախատեսվում է բոլոր բնակավայրերում կազմակերպչական աշխատանքների և անհրաժեշտ ռեսուրսների ներդրման միջոցով զարգացնել երիտասարդների մշակութային և ժամանցային առօրյան: Կարևոր է նշված պատմամշակութային տարածքներում զբոսաշրջության զարգացման հարցը:

Համայնքի 6 բնակավայրերում գոյություն ունեն գործող գրադարաններ:

1.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ

Համայնքում աշխատում են առողջության առաջնային պահպանության կենտրոններ (ԱԱՊԿ)՝ թվով 3, որոնք գտնվում են Մարմաշեն, Մայիսյան, Ջաջուռ բնակավայրերում և թվով 11 ԲՄԿ գործում են նրանց ենթակայությամբ, ունեն արդիական բժշկական սարքերով համալրման, կադրերի վերապատրաստման կարիք: Կարմրաքար բնակավայրը օգտվում է Հացիկ բնակավայրի ԲՄԿ-ից: Բուժհաստատությունները հիմնականում իրականացնում են առաջին բուժօգնության ծառայություններ: Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Ախուրյան համայնքից:

Համայնքապետարանը կազմակերպում և անց է կացնում ներհամայնքային ֆուտբոլի, շաշկու, շախմատի մրցումներ: Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Սպորտը առավել զարգացնելու համար համայնքին անհրաժեշտ է ունենալ մեծ սպորտային կոմպլեքս: Համայնքի տարածքում սպորտդահլիճներ առկա են միայն դպրոցներում, սակայն բոլոր սպորտդահլիճներում պակասում է համապատասխան գույքը: Բնակավայրերից շատերում առկա չեն բացօթյա խաղահրապարակներ:

1.14 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի Կրաշեն և Հովունի բնակավայրերում կառուցվել են մանկական խաղահրապարակներ, Վորլդ Վիժն Հայաստանի և նախկին համայնքների միջոցներով:

Համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում չկան հանգստի գոտիներ, զբոսայգիներ, ժամանցի վայրեր:

1.15 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու հույսը մնում է միայն՝ համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, դպրոցներում, քիչ թվով գործող և սակավաթիվ աշխատատեղեր ապահովվող ՊՈԱԿ-ներում և երիտասարդների համար արդեն ավանդույթ դարձած մոտակա զորամասերում պայմանագրային հիմունքներով աշխատատեղերում աշխատելու հնարավորությունը:

Համայնքի ծնողագուրկ, հաշմանդամ և սոցիալապես շատ ծանր վիճակում գտնվող երեխաները Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության միջնորդությամբ ունեն արտասահմանցի հովանավորներ, որոնք ժամանակ առ ժամանակ նվերներ, հագուստ, սնունդ և կենցաղային պարագաներ են ուղարկում իրենց հովանավորյալներին:

Համայնքապետարանը ևս հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցբերում սոցիալապես անապահով ընտանիքներին: Համայնքապետարանի սոցիալական աշխատողը պարբերաբար վիճակագրությունով վեր է հանում համայնքի խոցելի խմբերին և ներկայացնում նմանատիպ խմբերին օգնելու նպատակով եղած կազմակերպություններին:

Աղյուսակ 14-ում ներկայացված են համայնքում եղած աշխատունակ և գործազուրկ մարդկանց, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողագուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներ:

Համայնքապետարանը ևս հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցբերում սոցիալապես անապահով ընտանիքներին: Համայնքապետարանի սոցիալական աշխատողը պարբերաբար վիճակագրությունով վեր է հանում համայնքի խոցելի խմբերին և ներկայացնում նմանատիպ խմբերին օգնելու նպատակով եղած կազմակերպություններին: Աղյուսակ 14-ում ներկայացված են համայնքում եղած աշխատունակ և գործազուրկ մարդկանց, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողագուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներ:

Աղյուսակ 14. Մարմաշեն համայնքի աշխատունակների և գործազուրկների, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներն ըստ բնակավայրերի

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Մայիսյան	Կապս	Վահրամաբերդ	Մարմաշեն	Հովունի	Քեթի	Փոքրաշեն	Հացիկ	Շիրակ	Ջաջուռ	Կարմրաքար	Լեռնուտ	Մեծ Սարխար	Կրաշեն	Ջաջուռավան
1.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	31	1	3	3	0	0	11	0	3	4	1	0	1	0	2	2
2.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	7	0	0	0	6	0	0	0	0	0	0	0	1	0	0	0
3.	Հաշմանդամներ, այդ թվում՝	115	17	9	10	4	26	3	2	3	4	8	1	4	1	10	13
4.	Մանկուց հաշմանդամներ	34	4	3	3	2	7	1	2	1	2	1	1	1	0	2	4
5.	Աշխատունակներ	8149	1146	517	1004	1272	499	716	150	761	785	539	47	120	278	182	134
6.	Զբաղվածներ	6194	1055	421	782	1071	403	522	97	512	494	411	24	84	141	91	86
7.	Գործազուրկներ	1955	91	96	222	201	96	194	53	249	291	128	2 3	36	137	91	48
8.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	318	43	14	43	66	7	23	2	23	40	26	0	4	9	4	14

*1.16 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ*

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝ www.marmashenhamaynq.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

✓ 25.12.2017թ. N 12-Ա որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2018 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը»

✓ 31.01.2018թ. N 2 որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքը «Ախուրյանի միջհամայնքային միավորում» իրավաբանական անձանց միությանը անդամակցելու մասին »

✓ 31.01.2018թ. N 3 որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջնորդելու մասին»

Ավագանին 31.01.2018թ. N 5 որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման, քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտային հարցերի, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության և սպորտի հարցերով խորհրդակցական մարմնի (ԽՄ) կազմը՝ բաղկացած 8 հոգուց:

Ստորև ներկայացվում է հաստատված խորհրդակցական մարմնի կազմը.

- 1) Արշակյան Կարեն- Մարմաշեն համայնքի ղեկավար, ԽՄ նախագահ
- 2) Հարությունյան Հարություն- Մարմաշեն համայնքի ղեկավարի տեղակալ, ԽՄ քարտուղար

- 3) Արտաշես Դրմեյան – Համայնքի ղեկավարի օգնական, ԽՄ անդամ
- 4) Վիգեն Գրիգորյան – Շիրակ գյուղի վարչական նստավայրի օպերատոր, ԽՄ անդամ
- 5) Անի Մարտիրոսյան – Հովունի գյուղի վարչական նստավայրի օպերատոր, ԽՄ անդամ
- 6) Անի Մկրտչյան – Մարմաշենի համայնքապետարանի սոցիալական աշխատող, ԽՄ անդամ
- 7) Համլետ Գևորգյան - ավագանու անդամ, ԽՄ անդամ
- 8) Սլավիկ Խաչատրյան - ավագանու անդամ, ԽՄ անդամ

1.17 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառնություն: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Մարմաշեն համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի բնակելի շենք-շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնակավայրերում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

1.18 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրի ձևավորումն ապահովող և հետագայում այդ միջավայրը զարգացնող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է **ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** բաժնում:

Համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները ներկայացված են **հավելված 1**-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում,
- ✓ Գիշերային լուսավորության լուսատուների տեղադրում,
- ✓ Խմելու ջրի ցանցի վերանորոգում,
- ✓ Կոյուղու կոլեկտորի բացակայություն,
- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացում, զբոսայգիների,

խաղահրապարակների, հանգստյան գոտիների ավելացում,

- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ,
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության

ցածր մակարդակ,

- ✓ Կենդանիների մորթի իրականացման տարերայնություն
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն
- ✓ Որոշ վարչական նստավայրերում շենքային և գույքային անբավարար պայմաններ
- ✓ ՆՈՒՀ-երի ավելացում
- ✓ Կանգառների բացակայություն
- ✓ Առողջության առաջնային կենտրոնների և ամբուլատորիաների շենքային և

գույքային անբավարար պայմաններ

- ✓ Միջնակարգ դպրոցների շենքային և գույքային անբավարար պայմաններ
- ✓ Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների շտաբի

սենյակի հիմնում և գույքով համալրման անհրաժեշտություն

- ✓ Արտավայրերում ջրելատեղերի (ջրախմոցեր և խողովակաշար) վերանորոգման և կառուցում
- ✓ Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն
- ✓ Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտություն

- ✓ Համայնքի երեխաների և երիտասարդների գիտելիքների (ժամանակակից տեխնոլոգիաներ) բարձրացման անհրաժեշտություն
- ✓ Գերեզմանատների ցանկապատերի անբարեկարգ վիճակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՅՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

✓ Բերրի վարելահողերի, խոտհարքների և արոտների, պտղատու այգիների անտառների առկայություն,

✓ Հարուստ ջրային ռեսուրսների առկայություն,

✓ Շինանյութերի (տուֆ, բազալտ) պաշարների առկայություն,

✓ Աշխատունակ բնակչության մեծ տեսակարար կշիռ,

✓ Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայություն ու մշակութային հարուստ ավանդույթներ

✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը

✓ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայություն

✓ Միջպետական ճանապարհների, երկաթգծի առկայություն

✓ Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և ձկնարդյունաբերության ճյուղերի զարգացման հնարավորություններ,

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը

✓ Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր, և այլն) ոչ բարվոք վիճակը

✓ Բնակարանի կարիք ունեցող ընտանիքներ

✓ ՏԻՄ-բնակչություն թույլ կապը

✓ Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը

✓ Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողություններ

✓ Գյուղատնտեսական տեխնիկային պակաս, առկա տեխնիկայի մաշվածություն

- ✓ Համայնքի լուսավորվածության ցանցի անբավարար վիճակ
- ✓ Ոռոգման համակարգի քայքայվածություն
- ✓ Կոյուղու բացակայություն
- ✓ Գերեզմանատների պարսպի բացակայություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը
- ✓ Գյուղմթերքների, մսամթերքի, կաթնամթերքի վերամշակման փոքր և միջին

արտադրությունների ընդլայնման հնարավորությունը

- ✓ Զբոսաշրջության զարգացում
- ✓ Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու

նպատակով հնարավորությունների ստեղծումը (հիմնական նպատակը համայնքաբնակների համար աշխատատեղերի ստեղծում)

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում)

- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- ✓ Արտագաղթը՝ հատկապես երիտասարդների շրջանում

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մարմաշեն համայնքում տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության կարծիքը, որի համար հաճախակի կազմակերպվում են հանրային լսումներ, հանդիպումներ, քննարկումներ բնակչության ակտիվ խմբերի հետ(ԲԱԽ), ինչի արդյունքում վեր են հանվել բնակչությանը հուզող մի շարք խնդիրներ:

Մարմաշեն համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական

հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Լինել առաջատար համայնք, ապահովելով բնակավայրերի սոցիալ-տնտեսական հնարավորությունների զարգացումն ու ընդլայնումը, հասնել զբաղվածության միջին մակարդակ:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- ✓ Ապահովել համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի՝ համամասնական զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել համայնքի պատմամշակութային ժառանգությունը, բացառելով դրանց վնասումը կամ ոչնչացումը, ինչպես նաև ինքնակամ շինարարությունի իրականացումը և ապօրինի հողազավթումները
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը

- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը
 - Համայնքի զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝
- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարելավել համայնքապետարանի և վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքային և գույքային պայմանները
- ✓ Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- ✓ Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- ✓ Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ զբոսաշրջիկների համար
- ✓ Ունենալ բազմաֆունկցիոնալ կանգառներ
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Համայնքի բնակիչներին և զբոսաշրջիկներին ապահովել նրանց հանգստի կազմակերպման, շփումների ապահովման հաճելի պայմաններով
- ✓ Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Ունենալ բարեկարգ զբոսայգիներ
- ✓ Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ
- ✓ Արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները
- ✓ Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ
- ✓ Նպաստել կենդանիների մթերատվության բարձրացմանը
- ✓ Կազմակերպել միջոցառումներ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման, աղետներին դիմակայելու նպատակով

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Մարմաշեն համայնքում գալիք 2018-2022թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:
- Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատսպարանների և թաքստոցների կառուցում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

Մարմաշեն համայնքում առկա համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերն են.

1. Որպես խոշորացված համայնք, «Տարածքային Կառավարման և Զարգացման Նախարարության» միջոցներով համայնքում «Տարածքային Զարգացման Հիմնադրամ»-ն իրականացնում է «Մարմաշեն համայնքի ներբնակավայրային ու միջբնակավայրային ճանապարհների սպասարկման, կանոնավոր աղբահանության, տեխնիկայի վերազինման և ՀՈԱԿ-ի ստեղծման ծրագիրը»:

2. ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագիր՝ «Քարաղաց մեքենայի ձեռքբերում»:
3. Հայկական «Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հետ համատեղ Ջաջուռ բնակավայրում իրականացվում է «Ոռոգման համակարգի վերանորոգում և ցանցի ընդլայնում» ծրագիրը:
4. Հայկական «Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հետ համատեղ Շիրակ բնակավայրում իրականացվում է «Շիրակ համայնքի խմելու ջրի և ոռոգման ցանցի վերակառուցում» ծրագիրը:
5. Հայկական «Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հետ համատեղ Վահրամաբերդ բնակավայրում իրականացվում է «Վահրամաբերդ համայնքի ոռոգման ցանցի վերակառուցում» ծրագիրը:
6. «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագիր»-ը իրականացնում է Հովունի բնակավայրից մինչև Գյումրի-Աշոցք-Բավրա միջպետական ճանապարհին միացնող 5 կմ երկարությամբ ճանապարհահատվածը և Վահրամաբերդ բնակավայրի 15-րդ և 16-րդ ներբնակավայրային ճանապարհների 956մ երկարությամբ հատվածների կառուցում և ասֆալտապատում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 15):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 15. Համայնքի 2017-2018թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2019-2022թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2017թ. փաստ.	2018թ. փաստ.	2018թ. նախ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2022թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*							
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	278455.0	65968.8	314756,0	323057,0	328894,0	335106,0	341619,0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	59375.4	10779.8	82568,0	88805,0	92374,0	96100,0	99989,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	28585.1	44291.4	46453,0	50952,0	53426,0	56024,0	58751,0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	844.4	85.3	1466,0	1466,0	1466,0	1466,0	1466,0
	Հողի հարկ	27740.7	4206.1	44987,0	49486,0	51960,0	54558,0	57285,0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	29994.2	5401.0	34768,0	36506,0	37601,0	38729,0	39891,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	29994.2	5401.0	34768,0	36506,0	37601,0	38729,0	39891,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	796.1	1087.3	1347,0	1347,0	1347,0	1347,0	1347,0
	Տեղական տուրքեր	796.1	1087.3	1347,0	1347,0	1347,0	1347,0	1347,0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ		0.0					
	Պետական տուրքեր		0.0					
1.5	Այլ հարկային եկամուտներ		0.0					
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ		0.0					
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0.0					
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	209550.5	52523.4	210094,0	210094,0	210094,0	210094,0	210094,0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ		0.0					
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ		0.0					
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	209550.5	52523.4	210094,0	210094,0	210094,0	210094,0	210094,0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող	210234.3	52523.4	210094,0	210094,0	210094,0	210094,0	210094,0

	դրոտացիաներ							
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դրոտացիաներ		0.0					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0					
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0					
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ		0.0					
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0					
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0					
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	8750.1	2665.6	22094,0	24158,0	26426,0	28912,0	31536,0
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	12520.8	265.6	16206,0	17854,0	19656,0	21629,0	23688,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	7987.7	265.6	15476,0	17024,0	18726,0	20599,0	22658,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	3865.8	0.0					
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		0.0					
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	667.4		730,0	830,0	930,0	1030,0	1030,0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների							

	իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ		518.7	5888,0	6304,0	6770,0	7283,0	7848,0
	Տեղական վճարներ	168.9	518.7	5888,0	6304,0	6770,0	7283,0	7848,0
